

Հայոցի պատճեն

Արքայի Եղբայր ազգական  
Տելիք հետաքննութիւն 1914

891.99

Հ-30



-6 NOV 201

Հրատարակութիւն

Եղբ. Բ. Էւ Ա. Տէր-Վ. Ա. Թ. Ա. Նես. Նների

891.99

4-30 ամ

# ԱՐԻՒՆՈՏ ՍՄԻՆՔՆԵՐԻ ՀԵՏՔԵՐ

891.99 36

(ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ)

Ա. ՎԱՐԴԻԿԵԱՆԻ

34329  
-ուն մասնաւ ըմացի է մզգան արդյուն ավա-  
-րա մասան իջը մասն վե լազի պրդառուն իոց  
-քը դիմանունի զղմանացի մասն մաժելուրը  
աս Անառիկ մի թերակղզու վրայ գտնւում է  
Շամշուլդա\*) անմատչելի ամբոցը՝ պատերը այն-  
պէս լայն, որ մի սայլ ազատ կերպով կարող է  
անցնել և այնքան բարձր՝ ուր արծիւն անզամ  
կ'սարսի թևակոխել այդ տեղը. նա իւր ահռելի  
և գոռող տեսքով թագաւորում է ամբողջ շրջա-  
կայքի վրայ:

Աւելի ահռելի են երկու կողմը գտնւած  
խոր ու մութ ձորերը՝ ուր արեի ճառագայթ-  
ներն անզամ հազիւ են կարողանում թափանցել  
խիտ՝ անանցանելի անտառների միջով։ Հարա-  
ւային կողմ ձորի միջով վշւշալով ոլոր մոլոր օձի  
պէս վազում է Խրամ գետը, որը յայտնի է իր  
խրամուլ անուշ ձկնով, իսկ հիւսիսային կողմը  
նոյն գալարումներով վազում է կատաղի ձաւ-  
ճաւ գետը։

Անտառը լիքն է արջերով, եղջերուներով,  
այծեամներով, վարազներով. առիւծն ու վագրը  
շատ անզամ են կատաղի կոփւ մղել հայ գիւ-  
ցազների հետ ու գետին տապալւել\*\*):

\*) Շամշուլդա բերդը գտնւում է Զորափոր գտ-  
ւառում։

\*\*) Որսորդութիւնն ու քարտաշութիւնն այդ կող-  
մերում շատ զարգացած է մինչ այսօր էլ։

Այս երկու ձորերն էլ իրանց ահռելի տես-  
քով ժողովրդի վրայ մի տեսակ դիւթական ազ-  
գեցութիւն ունեն. վիշտապների, վճուկների, դե-  
ւերի բնակութեան տեղ են երեսակայում և սա-  
ծնունդ է տալիս զանազան աներեսակայելի պոաս-  
պելների:

Ամրոցի մուտքը մի նեղ ճանապարհով բա-  
ժանւում է Խրամի ձորից ու հազիւ թէ մի էշ  
բարձած կարողանայ անցնել այդ ճանապարհով,  
որը տանում է նեղ դոնով դէպի ամրոցը. մըտ-  
նելով այդ դոնով քո առաջ բացւում է մի մեծ  
դաշտավայր. այդ դաշտավայրի մէջ տեղում  
կան երկու աւազաններ, մէկը շատ մեծ, խո-  
րութիւնը մօտ 10 արշին, լայնութիւնը 40 ար-  
շին, իսկ միւսը փոքր է դրանից. երկու աւա-  
զաններն էլ շինւած են սրբատաշ քարերից, ո-  
րոնց չորս կողմը շինւած էին ծառուղիներ ու  
բուրաստաններ ու ջրապաշարի տեղ էին ծառա-  
յում պատերազմի ժամանակ. Խրամ գետի վե-  
րին ակունքը ջրանցքով միացած էր այս մեծ  
աւազանի հետ:

Ոչ հեռու աւազանից դէպի հիւսիս գտնվում  
էր երկու յարկանի տուն, երկու քարէ լայն  
սանդուխտներ տանում էին դէպի վերին յարկը,  
սանդուխտների վերին հրապարակի վրայ կան-  
գնած ձեռվ կան երկու դեղին մարմար քարից  
առիւծներ, որոնց սարսափելի հայեացքը ուղղւած

էր դէպի հարաւ. Լայն ու երկայն պատշգամբը  
գարդարւած էր քարէ սիւներով, իսկ գեղեցիկ փո-  
րագրւած դոնով մտնում էին կճեայ սիւնազարդ  
դահլիճը, առաստաղի և պատերի վրայ նկարւած  
էին գեղեցիկ տեսարաններ, կային մօտաւորա-  
պէս 30 սենեակներ, ամենն էլ զարդարւած գոր-  
գերով, պատերից կախւած էին զենքեր— վահան-  
ներ, սաղաւարտներ, գուրզեր, սրեր, նետ ու  
աղեղ, նիզակներ, քնար, քամանչա, դահլիրա,  
եղջերւի ու այծեամի եղջիւրներ, երկաթէ թե-  
ւից գործւած շորի վրայից հանգնելու շապիկ-  
ներ. բացի այդ զարդարանքներից դահլիճը զար-  
գարում է երկու արծւանշան գրօշակներ, իսկ  
գրւագների վրայ կային զանազան արծաթեայ և  
պղնձեայ ամաններ, բոլոր սենեակներն էլ լու-  
սաւորւած էին հերթիկից. Ամրոցից գուրպ՝ ա-  
րևելեան կողմը գտնւում են փառաւոր պարտէդ-  
ներ, իսկ մի փոքր հեռու գտնւում է հին դիւ-  
ցագնական գերեզմանատուն. այս գերեզմանա-  
տունը նշանաւոր է իր հին արձաններով, միքարից  
կերտւած թէ նստած և թէ կանգնած դիրքով ձիա-  
ներ, վրան փորագրւած հին զէնքեր— սուր, նետ  
ուաղեղ, գուրզ, վահան և այլն. Այդ տեղից մի  
փոքր հեռու դէպի արևելք գտնւում է մի ջրվէժ—  
Պըտտան գեօլ անունով. աւանդութիւնն ասում  
է, որ ամառը շոգ ժամանակներում Զօրայր իշ-  
խանը ջրվէժի գլխից ցատկում էր ներքեւ ու

անյայտանալով ջրի անդունդում, ապա խիստ  
ալեկոծելով ջուրը՝ դուրս էր գալիս ջրի մակե-  
րևոյթը։ Զրվէժի երկու կողմը բարձրանում են  
երկպատ լեռներ, ու վերևից նայողի վրայ  
սարսուռ է ազդում։ Աշ կողմը լերան մէջ ե-  
րեսում է մի քարայր, որտեղ, ասում են, պահ-  
ւած կայ իշխան Զօրայրի ոսկէ օրօրոցը և ոսկէ  
գութանը, բայց ինչ խիստախ, ինչ յանդուգն  
մարդ սիրտ կանի և մի որեւէ ննարքով կ'իջնի-  
ու ներս կըմտնի, դեռը այդ յանդուգնին կը-  
բռնեն ու կը փակեն այդ քարայրի մէջ, որտե-  
ղից այլևս աշխարհիս լոյսը չի տեսնի։

Այդ ամբոցի տէրն էր ծերունի իշխան Թորգոմը, որը 125 նոր տարի տեսած մարդ էր. իսկ ծերունի Գարան իշխանուհին 110 տարեկան էր. չնայած այդ պատկառելի հասակներին, նրանք երկուսն էլ դեռ աշխայժ էին, կինը կարողանում էր բարակ գուլպայ գործել, իսկ մարդը կարողանում էր ատամներով ընկոյզ կոտըրտել:

Ծերունի իշխանը իր ամբողջ կեանքը հա-  
մարեա պատերազմների մէջն էր անցկացըել,  
շատ վէրքեր էր ստացել և շատ մահացու վէրքեր  
տւել թշնամիներին, մի ձեռքն էր անդամալու-  
ծած ու վզից փաթաթոցով կախ ընկած, իսկ  
գանգի վրայ սաղ տեղ չունէր ու ձեռնափայ-  
տով էր ման գալիս:

Աւանդութիւնն ասում էր, որ դրանք 34  
որդու ծնողներ են եղել, 18 աղաներ, իսկ մա-  
ցեալն աղջկերք, ութը թոռներ պսակւած են  
եղել ու բազմաթիւ զաւակների տէր եղել, 30  
օրօրոց էր օրօրւում դրանց տանը։ Օրական  
չորս ոչխար էր մորթւում ու երեք թորոն հաց  
թխւում, դրանց ոչխարի սուրուներին ու կթան  
կովերին համբարք չ'կար։

Շատերը որդիկերանցից ծերացել էին, իսկ  
շատերն էլ պատերազմի դաշտում սպանվել,  
մնացողների մէջ ամենից աչքի ընկնողն էր իշ-  
խան Զօրայը, որը 40 տարեկան կտրիչ, բար-  
ձրահասակ, լայն թիկունքով մի գեղեցիկ տղա-  
մարդ էր։ Նրա ոյժի մասին հազար ու մի տե-  
սակ հեքեաթներ էին պատմում. ասում էին, որ  
գերեն ու վիշապները ջնջեց այդ երկրից։

Նա շատ խելօք ու իմաստուն մարդ էր՝  
միւս եղբայրները—Վարոսը և Վահրատը նոյն-  
պէս ուժեղ էին, նամանաւանդ առիւծասիրտ  
Վահրատը, բայց ոչ մեկը իրանց ոյժով Զօրայրին  
չէին հասնի: Նրա ահեղ ձայնը դղրդեցնում էր  
անտառ ու գաշտեր, գազանները դրա ձայնից  
վախչում ծածկում էին ձորերում:

Զօրայրը դեռ 20—25 տարեկան հասակում  
իրան հաւասարը չ'ունէր երիտասարդների մէջ.  
Նա ճկուն էր ինչպէս ուետին, ըմբշամարտութեան  
մէջ դեռ նրա մէջքը տափին չէր կպել, ամենահե-

ռաւոր երկրներից փահեվաններ էին գալիս,  
հայ, թուրք, վրացի, յոյն, իրանց ոյժերը նրա  
հետ չափելու, բոլորն էլ վիզերը ճկւած վերա-  
դառնում էին իրանց աները։ Հարիւրաւոր իշ-  
խանուհիներ նրա համար հալւում ու մաշւում  
էին ու նրա սիրով տոչորւում, ամենի աչքը նրա  
վրայ էր, յոյսն ու ապաէնը նա էր իր երկրի։  
Աշուղները երգեր էին կապում ու երկրէ-երկիր  
ման գալիս նրա քաջութիւնները դրւատում ի-  
րանց քնարների վրայ։  
Իր ոյժով պակաս չէր դրանց փոքր քոյր-  
Զարիկը։

Իբրև նշան դրանց ոյժի՝ մինչ այսօր էլ  
մնում է դրանց կանգնած արձանը, որը հետե-  
ւեալն է ներկայացնում. ամրոցին կից այգինե-  
րից մէկում մի բլուրի վրայ դրւած են իրար  
վրայ չորս մեծ ջաղացի քարեր, ներքին ամենա-  
մեծ քարը, որի տրամագիծը  $2^{1/2}$  արշին է, իսկ  
բարձրութիւնը  $\frac{3}{4}$  արշին, դրել է իշխան Զօրայրը.  
Դրանից փոքրը դրել է Վարսուր, մի ուրիշ փոքրը  
դրել է Վահրամը, իսկ կլոր մեծ քարը դրել է  
Զարիկը։ Ոչ հեռու ամրոցից գտնւում է մի  
հայոց գիւղ Շամշուլդա\*) անունով։

\*) Քոլագիր գիւղը պարսիկների ձեռքով քանդ-  
ւելուց յետոյ՝ գիւղացիները փախչում են ու այդ ամ-  
րոցի մօտ մի լեռան լանջի վրայ շինում են Շամշուլ-  
դա համանուն բերդի անունով գիւղը։ Այդ անունը

Զնայելով Զօրայրի հսկայ ուժին ու քաջու-  
թեան, բայց և այնպէս համեստ էր և չէր սիրում  
պարծենալ իր ոյժով կամ խելքով, ընդհակառակ,  
վարոսը շատ մեծամիտ, փառասէր և յան-  
դուզն մարդ էր, նա շատ անհաշտ էր եղբայր-  
ների հետ և միշտ էլ նախանձով էր նայում մեծ  
եղբօր վրայ, որ հօրից ստացել էր իրաւունք  
տան մէջ մեծ լինելու և կառավարելու երկիրը։  
Վարոսի մէջ մի տեսակ նենդաւոր ծածկամտու-  
թիւն կար և ամենի աչքին կասկածելի և ատե-  
լի էր դարձել։

Այդ ամրոցի վրայ Պարսից խաները շատ  
անհաշտ աչքով էին նայում և միշտ էլ երկիւղ  
էր ազգում նրանց վրայ և շատ անգամ է նը-  
րանց արշաւանքների առաջը կարել. մի քանի  
անգամ Ալի խանը իր բազմաթիւ զօրքերով ար-  
շաւել էր այդ ամրոցի վրայ և միշտ էլ ջարդ  
կրել, սակայն, Ալի խանը չէր յուսահատում և  
միշտ էլ մտքից չէր մոռացւում իր որդու մահը,  
որ Զօրայրի սրին զոհ էր զնացել։ Նա զիշեր  
ցերեկ այն էր մտածում՝ թէ ինչպէս իր վրէծը  
լուծի Զօրայրից. բաց պատերազմում ճակատ  
առ ճակատ նա վախենում էր Զօրայրի անօրի-  
նակ քաջութիւնից և բազմագիտութիւնից, նա-  
որպէս աւանդութիւն ասում են իրը թէ վրացերէն է.  
Վրացերէն այդ խօսքը նշանակում է Յ եղբայր և մէկ  
քոյր։

մանաւանդ նրա հզօր նեցուկն էր ահռելի բերգը, որին ոչ մի մարդկային ձեռք չէր կարող մօտենալ. մի այլ ճանապարհ էր նա փընտրում. նա լաւ գիտէր Վարոսի նախանձոտ, փառասէր և թոյլ ընաւորութիւնը, գիտէր նաև, որ եղբայրների մէջ գժառութիւն կայ, ուստի ուզգեց օգտւել հանգամանքից: Նա ծպտեալ կերպով մարդ էր ուղարկում Վարոսի մօտ և նամակի մէջ զանազան բարիքներ խոստանալով հրաւիրում է իր մօտ, Զօրայրին նոյնպէս մի նամակ է ուղարկում, որպէս թէ ուզում է խաղաղ բարեկամական յարաբերութիւն պահպանել, ուստի խնդրում էր գալ իր մօտ որոշ պայմաններ մշակելու:

Իշխան Զօրայրը լաւ հասկանալով Ալի խանի յետին մտքերը, որ իր մօտ հրաւիրելով ուզգում է զրկել երկիրը հզօր պաշտպանից և հեշտութեամբ տէր դառնալ այդ երկիրն, ուստի, զանազան ընտանեկան հանգամանքներ պատճառ բերելով՝ իրան՝ Ալի խանին է հրաւիրում իր մօտ:

Ալի-խանը տեսնելով որ իր խարդախ միտումները հասկանալի եղան Զօրայր իշխանին, իրան յատուկ մեծամասութեամբ մի սպառնալի ցնամակ է գրում և պահանջում է գալ և իրան հնազանդւել, եթէ ոչ հակառակ դէպքում սպառնում էր ամբողջ երկիրը ոտքի տակ տալու:

Զօրայր իշխանը այս նամակը ստանալուն պէս՝ խորհրդի է հրաւիրում իշխաններին, մեծաւորներին և իր զինակիցներին ու նրանց մօտ կարդում է Ալի-խանի նամակը:

Առաջին բողոքի ձայն բարձրացը ծերունի իշխան Թորգոմը:

—Ոչ, սիրելի որդիքս, ասաց նա, ես աւելի շուտով աջ ձեռքս կ'կարէի՝ քան կհամաձայնէի այդպիսի մի ստորացուցիչ պայմանի տակ ստորագրելու:

Բոլոր ժողովականները նոյն երդումը կը կնեցին, որ աւելի շուտով պատրաստ են իրանց վերջին կաթիլ արիւնը թափելու, միայն թէ պաշտպաննեն իրանց հայրենիքի արժանապատութիւնը:

Սակայն Վարոսը իր ծածկամիտ մակարդակները առաջ տանելու համար՝ ուզգեց մի տեսակ մեղմացնել բորբոքւած մտքերը և համոզել այդ վճռի անօգտակար լինելը:

—Իշխաններ, —ասաց նա, — Դուք պատերազմների պատմութիւնը ինձանից լաւ գիտէք, Զեղ լաւ յայտնի է, որ չ'կայ մի բերդ, որ վերջի-վերջոյ չ'ընկնի, յոյս դնել բերդի պատերի վրայ, դա ժամանակաւոր արգելառիթ է, ինչպէս որ կրիան փակւում է իր ոսկրոտ փականքի մէջ թշնամուց պահպանւելու համար, այն ինչ

շատ հեշտութեամբ կարելի է իր փականքների  
մէջ խեղել...

—Այլ առակ լւարուք. —ասաց զինւորական-  
ներից մէկը:

—Յետոյ, —բարձրաձայն գոչեց միւսը:

—Իշխաններ և պատւաւոր քաղաքացիներ,  
կարծեմ, որ էլ երիտասարդ ոյժեր չ'մնացին, ըո-  
լորին էլ զէնքի կանչեցինք, մինչև անգամ քա-  
ղաքացիներից  $40-50$  տ. մարդոց զինեցինք,  
բայց ոչինչ չ'շահեցինք: Այս լարւած դրութիւ-  
նը մեծ զոհաբերութիւններ է պահանջում, ո-  
րին մենք ձեռնհաս չենք ևս մենք իսպառ յոգ-  
նել ենք:

—Կարելի է, որ դու ես յոպնել շատ գործ-  
շինելուց, —լսւեցին աջ ու ձախից ձայներ...

—Մեր կոիւը անհաւասար է, վերջի-վերջոյ  
պէտք է զիշենք ոյժի առաջ...

—Ի հարկէ, եթէ քեզպիսի հայրենասէրներ  
կան, անկասկած է... կծու կերպով նկատեց  
ժողովականներից մէկը:

—Դեռ մինչև այսօր յաղթել ենք, յուսով  
ենք դարձեալ կ'յաղթենք, —ասաց մի ուրիշը:

—Անմիաբանութիւնը կարող է մեղ յաղ-  
թել, լաւ իմացիր, իշխան Վարոս, —ասաց մէկ  
ուրիշը:

—Դուք դիտէք... —յուզւած ձայնով ասաց

վարոսը, —աւելի խելացի կ'լինէր, որ խաղաղու-  
թեամբ վերջացնէինք...

—Ինչպէս կ'հրամայէիր որ անէինք, —ա-  
սաց ծերունի մի զինւորական, որ յոնքերը կի-  
տած նստել էր երկար նստարանի վրայ:

—Մի որոշ հարկ տայինք, օգնէինք պա-  
տերազմի ժամանակ և...

Ծիծաղ, աղմուկ լսւեցին ամեն կողմից  
և չ'թողին, որ խօսքը վերջացնի. նա սաստիկ  
յուզւած նստեց իր տեղը: Իշխան Զօրայրը, որ  
մինչ այդ ժամանակ լուր ունկնդրի գեր էր կա-  
տարում, վերկացաւ տեղից և իր՝ հեղինակաւոր  
խօսքն ասաց:

—Միրելի ժողովականներ, ես ինքս հակա-  
ռակ եմ մարդասպանութեան, ասպատակու-  
թիւնների, ես ինքս անդորրութեան ու խաղաղ  
ապրելու կողմնակից եմ. ուր չ'կայ խաղաղու-  
թիւն՝ այնտեղ մեռնում է կեանքի յառաջադի-  
մութիւնը, իսկ զգւելի արիւնհեղութիւնը կոր-  
ծանում է երկիրը: Բայց արի տես, որ թշնա-  
մին արիւնաբռու է, նա սպառնում է մեր եր-  
կիրը քարուքանդ անել, չնչել մեր ինքնուրոյ-  
նութիւնը, ի հարկէ մենք չենք կարող հանդի-  
սատես լինել մեր հայրենիքի կործանման և զի-  
տեմ ձեզանից ոչ մէկը չի համաձայնիլ մի այդ-  
պիսի դատապարտելի գործին և ում մէջ էլ քա-

ջութիւն և հայրենիքի սէր կայ՝ պիտի զէնք  
բարձրացնի արիւնարբութշնամու դէմ:  
կան միամիտ մարդիկ, որոնք հաւատում  
են թէ Ալի-խանը մեր երկրի երջանկութիւնն է  
կամենում, ոչ, սխալում են դրանք, իմ խո-  
րին համոզմունք է, պէտք է զինւել մեր թըշ-  
նամու դէմ, որպէս զի մեր երկիրը փրկենք  
թշնամու ձեռքից, իսկ այլ տեսակ մտածել, նը-  
շանակում է թշնամի լինել հայրենիքի:  
Ժողովուրդը ոգեսորւած Զօրայրի խօսքերից,  
ամեն կողմից լսւեցին, — կեցցէ իշխան Զօրայր,  
թող կորչի Ալի-խանը:

— Մի երկու խօսք ես, եղբայր Վարոս, — շա-  
րունակեցնա, — միթէ կարծում ես, որ եթէ ամրո-  
ցը յանձնեցինք թշնամուն ու հարկ վճարեցինք,  
դրանով ապահովեցինք մեր հայրենի երկիրը.  
պէտք է լաւ իմանաս, որ պարսիկը տմասդ է  
և դաւադիր, նա վայրենի է, նա ամեն ըռպէ  
կարող է պահանջել քո սիրուն կնոջդ, քո աղջը-  
կադ, իսկ դու անզօր՝ ականատես պէտք է լի-  
նես այդ ստորացուցիչ և անպատւաքեր գործի,  
նա կ'պահանջի քո վերջին ունեցածը, կ'ապա-  
կանի քո բոլոր սրբութիւնները, քո ազգային  
արժանապատւութիւնը ոտքի տակ կը տայ և  
դու որպէս կենդանի դիակ պէտք է խոնարհես  
և լոռութեամբ տանես: Եթէ տղամարդ ես և  
սիրտ ունես, պէտք է կուես, կամ սպանես կամ

սպանւես, իսկ եթէ փոքրոզի ես՝ պէտք է փա-  
րուստ տաս...  
— Ինչպէս Բոլնիսի կուից, — խօսքը ընդհա-  
տեց մի կարճիկ զինւորական:  
— Ո՞չ, ես չեմ փախել, դա զրպարառութիւն  
է... բացականչեց Վարոսը:  
— Ճշմարիտ է... ասաց մէկ ուրիշը:  
— Սուտ էք խօսում, — կատաղած բռունցք-  
ներ սկսեց շարժել օդի մէջ: — Միթէ իրաւ է,  
իշխան Զօրայր, ի՞նչու չես խօսում...  
— Անցած բան է, — ասաց ծիծաղելով Զօ-  
րայրը:

— Ա՛յօ, — Վարոսը մերկացրեց սուրը ու  
կատաղի կերպով առաջ վազեց Զօրայրի վրայ,  
իսկ Զօրայրը հանգիստ ու վճռական ձեռվ ա-  
սաց.

— Սուրդ դիր պատեանդ, ով եղօր վրայ  
սուր է բարձրացնում՝ սրով էլ մենասում է:

— Իսկ Վարոսը չ'անսալով սրա նրա խոր-  
հուրդներին՝ անտեղի խօսքեր էր շպրտում նրա  
հասցէին: Զօրայրը տեսնելով որ սահմանից  
դուրս է գալիս Վարոսը, մերկացրեց սուրը ու  
բարձրածայն գոչեց.

— Եղբայրս լինի թէ մի ուրիշը, եթէ նա թըշ-  
նամի է իմ հայրենիքին՝ թող կորչի, — ու կա-  
տաղի յարձակւեց Վարոսի վրայ:

Այս տեսնելով մօտիկ կանգնողները շուտ

վրայ հասան ու կանգնեցրին Զօրայրին, իսկ  
ծերունի հայրը դողլողալով մօտ վազեց ու ա-  
ղաչանքի ձայնով ասաց.

— Զօրայր, արեիդ մեռնիմ՝ ինայիր մեզ...  
ու մի ձեռքով գրկելով վիզը համբուրում էր  
նրա երեսը:

— Հայրիկ, բաւական է՝ վերջապէս շատ  
համբերեցի: Ի՞նչու է ապրում նզովածը:

Իսկ Վարոսը շարունակում էր եղթօք հաս-  
ցէին անվայել խօսքեր ասել:

— Վերջապէս կորիր այդտեղից, — ասաց ծե-  
րունի իշխանը և սկսեց փայտով խփել յատակին:

Ժողովուրդը սաստիկ կատաղեց Վարոսի վրայ,  
իսկ Վարոսը տեսնելով որ իր օրը կարող է ու-  
ժիշտ տեղ մթնել, աճապարեց դէպի փողոց ու

դուռը չ'հասած՝ բռունցքը սեղմելով ատամների  
մէջ, մի սպառնալի հայեացք ձգեց Զօրայրի

վրայ ու մատը թափ տալով ասաց. — Շատ լաւ:

Ասաց ու դռները իրար խփելով դուրս փա-  
կեց: Ժողովուրդը աւելի կատաղեց, բայց եթէ

Զօրայրը չը հանգստացնէր ժամանակին՝ Աստւած  
գիտէր թէ ինչեր կարող էր պատահել. երեւ  
Վարոսը կենդանի չէր մնալ:

Վարոսը դուրս վազեց այդ տեղից՝ կանգ  
առաւ աւազանի մօտ, նրա սիրտը պաշարել էին  
զանազան դժոխային մտածմունքներ, ինչպէս  
Յուղա՝ վրէժ էր նիւթում:

Լուսինը կամաց-կամաց զլորւում էր  
երկնակամարի վրայ ու պարզ լուսաւորում էր  
այն ծառուղիները, որտեղ կանգնած էր Վարոսը:  
Նա կատաղած բռունցքներ էր շարժում դէպի  
այն տունը, որտեղից խայտառակ կերպով դուրս  
վնդեցին:

Նա ծոցից հանեց Ալի խանի նամակը, մօ-  
ւեցրեց աչքերին և սկսեց մի դիւային ժպի-  
տով կարդալ այն տողերը, որտեղ գլւած էր.

— Նա խոստանում է ինձ տալ այս երկրի  
իշխանութիւնը, այն, ինչոր իմ բաղձանքս է...  
Դէհ, Զօրայր, տեսնենք, այժմս էլ պարծեցիր  
քո ոյժով ու խելքով, այժմ ես պէտք է լինեմ  
տէր ու տիրական այս ամրոցի, իսկ գու իմ հլու  
հպատակս պէտք է դառնաս:

Ասաց ու շտապով քայլերը ուղղեց դէպի  
տուն:

Ճրագի աղօտ լոյսը հազիւ լուսաւորում էր  
սենեակը, նա նստեց թախտի վրայ, գլուխը կախ  
գցեց ձեռքերի վրայ և խոր մտածմունքի մէջ  
ընկաւ: Քնած էին ամենքը ու ամեն ինչ ան-  
դորր էր դուրսը բնութեան գրկում, աքաղաղնե-  
րը մի բերան կանչեցին: Տան դուռը սկսեցին  
ծեծել: Վարոսը գլուխը բարձրացրեց:

— Ով պէտք է լինի, — նա վախեցած չը վըս-  
տահացաւ իսկոյն դուռը բանալ. մօտեցաւ դրանը,  
բայց դուռը ծեծելուց չէին դադարում:

—Ո՞վ ես...  
 —Ես եմ, բաց դուռը.  
 —Վահրամտ...  
 —Ես եմ... Վարոսը ուրախացած շտապով  
բացեց դուռը:  
 —Վահրամտ ջան,—ասաց, գրկեց նրան ու  
համբուրեց. բայց Վահրամը զգւանք զգաց եղ-  
քօր համբուրից:  
 Վահրամը մի սիրունատես 24 տ. երիտա-  
սարդ էր, արծւաքիթ, ոլորած սև բեխերով,  
կուրծքը դուրս ցցւած:  
 —Ի՞նչ լաւ, որ եկար,—անհամբերութեամբ  
ասաց Վարոսը:  
 —Այ մարդ, այդ բան էր որ դու արեցիր,  
—ասաց վրդոված Վահրամը:  
 —Ես եմ մեղաւոր, —ասաց նա սուտ Քրիս-  
տոս ձևանալով:  
 —Աւելի քան թէ մեղաւոր ես, —խիստ կեր-  
պով շեշտեց Վահրամը:  
 —Դու էլ ես ինձ մեղադրում... բռունցքը  
ճակատին սղմեց ու դէմ զըեց սիւնին, —Այս,  
Սստւած իմ, ինչու ճշմարիտ չես խօսում, ին-  
չու ես կողմնապահութիւն անում, Վահրամ, —  
ասաց խղճալի ձայնով Վարոսը:  
 —Ես կողմնապահութիւն անեմ, քաւ լի-  
ցի, —ասաց վրդոված Վահրամը:  
 —Դու չ'տեսար և չըլոեցիր այն ծանր խօս-

քերը, որ ուղղած էր իմ դէմ, և Զօրայրը թոյլ է  
տալիս ուրիշներին ևս, կա վայել էր...  
 —Թո բռնած դիրքն էր ուրացասական վերա-  
բերմունքդ մեր ընդհանուր գործին, հասկացար,  
 —ձեռքից բռնեց ու շեշտակի հայեացքով ձգեց  
նրա աչքերին: —Պարզ ասած, դու դատապար-  
տելի ես, և բաց վանեց ձեռքը:  
 —Ինչով, ի՞նչ բանի համար...  
 —Հէնց նրա համար, որ սուրդ մերկացրիր  
քո եղբօր դէմ, այն եղբօր, որ այնքան խնամք  
ունի մեզ վրայ, դա տմարդութիւն է, դա յան-  
ցանք է: Երբ նա կուրծքը դէմ զրած թշմա-  
մուն իր ընկած հայրենիքն է՝ ուզում պաշտ-  
պանել, գունրա դէմ դաւադրութիւն ես սարքում,  
միթէ դատապարտելի չէ քո վարմունքը:  
 —Այս, բա դու չ'լսեցիր այն զրպարտու-  
թիւնները, որ թափեցին իմ երեսիս, միթէ կա-  
րող էի տանել. ես փախուստ տւի... էլ ինչու է  
ապրում այս գլուխս, —և սաստիկ յուզւած սկսեց  
գլխին խփել:  
 —Թողնենք այդ, Վարոս, —հեգնանքով ա-  
սաց Վահրամը: Եթէ մենք քո խորհուրդներով  
դեկավարենք՝ վայն եկել է տարել մեզ:  
 —Ո՞չ, աւելի շուտով ձեր խորհուրդներով:  
 —Երդուում եմ որ սխալւում ես հաշիւնե-  
րիդ մէջ:]  
 —Իսկ դուք սխալւում էք ձեր անհեռատե-

սութեամբ, Զօրայրը ուզում է զոհ բերել մեղիր փառասիրութեան, բայց դուք այդ չեք հասկանում... հա, հա, հա,—և դիւային մի քրքիչ շառագունեց նրա երեսը:

—Մենք շատ լաւ ենք հասկանում թէ քեզ և թէ նրան. ինչոր դու մտածում ես բոլորը խարուսիկ երազներ են և չեն կարող պահպանել մեր գոյութիւնը, միաբանելով մեզ հետ սարեր շուռ կ'տանք, իսկ անմիաբանութեամբ կ'կործանենք ամեն ինչ:

—Քո կամքն է, Վահրատ, կարող ես հետևել եղօրդ, բայց տես որ չզղջաս:

—Դաւաճանել իմ հայրենիքիս չեմ կարող, որտեղ բոլորը՝ ես էլ այնտեղ, ահա իմ նշանաբանս, —այս ասաց ու վերկացաւ տեղից. այլ տեսակ՝ սիրտս կ'պոկէի իմ միջիցս՝ եթէ հակառակ բան թելադրէր ինձ:

—Ես չեմ սիրում կուրօրէն հետևել, այլ գիտակցութեանս թելադրութեամբ վերապահում եմ իմ որոշումներս:

—Այդ քո կամքն է, —ասաց վիրաւորւած Վահրատը, —մնաս բարեաւ, —և ուզում էր հեռանալ: Վարոսը ձեռքով նշան արեց: —Վահրատ, սպասիր...

—Ես քեզ չեմ հասկանում, Վահրոս, —յուղած ասաց Վահրատը:

—Ես իմ հայրենիքիս անդորութիւնն եմ պնտըում:

—Այդ ո՞վ չի ուզում, —խօսքն ընդմիջեց Վահրատը:

—Դու ուշադրութիւն մի դարձրու նրա անհեթեթ մտածմունքներին, նա ուզում է մի երկրորդ Աղէքսանդր Մակեդոնացի դառնալ, —հեգնանքով ասաց Վարոսը:

—Եթէ կարժի է՝ փառք ու պարծանք նրան և փառք հայ ազգին, որ Աղէքսանդր Մակեդոնացի կարող է ծնել:

—Հա, հա, հա, Աղէքսանդր Մակեդոնացի... հա, հա, հա, —դիւային քրքիջով սկսեց նայել Վահրատի վրայ, կարծես ուզում էր նրան և ծաղրի առարկայ շինել, իսկ Վահրատը նեղացած Վարոսի այդկերպ վարմունքից, մի տեսակ արհամարհական հայեացք ձգեց նրա վրայ և մի ըռպէ լոելուց յետոյ ասաց.

—Բայց և այնպէս նա զիխով բարձր է կանգնած քեզանից...

—Կարծնեմ ես...

—Ոչ, չեմ կարծում, նա իւր հայրենասիրութեամբ ու խելքով կ'գերակշոփ քեզ, նա առիւծ է պատերազմի դաշտում, նրա առաջ խոնարհում է թշնամին անգամ, նա արժանի է ամեն յարգանքի ու գովասանքի, իսկ զու, Վարոս, ուզում ես թոյն խառնել մեր ուխտեալ բա-

ժակի մէջ, մինչ դու կ'մտածես եղբօրդ դաւա-  
գրելու՝ ինքդ կ'կործանւես: Այս ասաց ու մի-  
սպառնական հայեացք ձգեց նրա վրայ:  
—Ոչ, ես իմ հայրենիքի անդորրութիւնն եմ  
կամենում:

—Երևի գերեզմանային անդորրութիւն:

—Դու ինձ վիրաւորում ես, Վահրատ...

—Իսկ դու վիրաւորում ես հայրենիքդ. այն-  
ճանապարհը, որ դու ես բռնել՝ զիտես ուր է  
տանում քեզ:

—Մի անապատ, մի անմարդաբնակ տեղ,  
ուր ոչ աչքս կարող է տեսնել և ոչ էլ ականջս-  
լսել իմ հայրենիքիս դժբաղառութիւնը:

—Լաւ տեղ ես գտել. լաւ է որ հայրենիքը  
քո սկ երեսը չի տեսնիլ. երթաս բարեաւ,—ա-  
սաց ու շտապով դուրս եկաւ այն տեղից:

Վահրատը հեռանալով, Վարոսը խիստ մտած-  
մունքի մէջ ընկաւ. գլխաւոր մտածմունքը նրա-  
նումն էր, որ չկարողացաւ եղբօրը Զօրայը դէմ-  
զինել, ուրեմն իր միակ յոյսը Ալի խանն էր: Նա-  
մի անգամ ևս հանեց Ալի խանի նամակը, սկսեց-  
առանձին հաճոյքով կարդալ: Յետոյ շտապով ծա-  
լեց նամակը, առաւ եղեգնի գրիչը՝ ուղում էր  
գրել, —բայց, —ինչ բայց, «Տէր ու տիրական»  
սրանից էլ մեծ փառք միթէ կարող է ինձ վի-  
ճակւել: —Ես համաձայն եմ, խան, քո առաջար-  
կած պայմաններին, երեք օրից յետոյ ես կ'լի-

նեմ Խաչէն. Նա նամակը կնքեց ու ծառային  
կանչելով՝ պատւիրեց որ մինչ լուսանալը այդ  
նամակը հասցնի Ալի խանին, որ երեան էր նըս-  
տել իր վեսայ Զամալ խանի մօտ:

—Ծառան վերցնելով նամակը՝ կապեց զօ-  
տու մէջ, թուաւ ձիու մէջքը ու քշեց ձին:

Վարոսը էլ չ'ուզեց ուշացնել, նա հասմէպ  
սկսեց պատրաստւել ու կարգիցցել իր մնդուկը.  
Ճանապարհի համար ինչ որ հարկաւոր էր—  
սպիտակեղէն, կարմիր թաւշեայ կաբան բուզ-  
մենտներով զարդարւած, բարակ սկ շալից անդ-  
րավարտիկ, սպիտակ կեռ ծայրերով կօշիկներ,  
կողքերը ոսկէ կոճակներով զարդարւած, վերից  
կարմիր փունջ կախւած: Մուգ շագանակագոյն  
բուխարի գտակ, ոսկէ կոճակներով կապոյտ ատ-  
լասի արխալուխ, ոսկէ գօտին զարդարում էր  
մէջքը, ոսկով զարդարւած Խորասանի կեռ սու-  
րը, վահան, ձիու կախւած գուրզը: Երբ ամեն  
ինչ պատրաստ էր, նա դեռ արել չ'ծագած, ծա-  
ռաներին պատւիրեց, որ հարցնողներին ասեն,  
որ Խաչէն է գնացել իր հարսնացուի մօտ: Ու  
շտապով նստեց իր կարմիր նժոյզը, ծառաներից  
երկուսին իր հետ առնելով՝ ինքը ևս զինւած,  
ծպտեալ կերպով հեռացաւ տանից:

Դեռ աղամամութն էր, երբ Վարոսը գուրս  
եկաւ տանից, դուրս մարդ չէր երեւմ, ամեն  
տեղ անդորրութիւն էր տիրում, միայն զիւղի

շներն էին, որ երբեմն-երբեմն հաջում էին։  
Վահրատը յուզւած վարոսի հետ ունեցած  
ընդհարումից, նա համարեա գիշերը շատ քիչ  
էր քնել, վախում էր եղբօր դաւադրութիւնից,  
որ կարող է հայրենիքը վտանգի մէջ ձգել,  
բայց տարակուսանքների մէջ էր ընկնում։ նա  
չէր մտածում, որ իր եղբօր հոգին ապական-  
ւած է փառասիրութեամբ և ընչասիրութեամբ,  
որի համար պատրաստ էր հայրենիքն անգամ  
զոհ բերելու։

— Եթէ իրաւ, նրա հոգու մէջ մտաւ սա-  
տանան ու ուզեց իրականացնել այդ միտքը, ոհ,  
ես այն ժամանակ նրան դժոխքի կ'մտանեմ, —  
ուստի, նա շտապեց նորից տեսնւելու վարոսի  
հետ։ Սակայն, զարմանքը մեծ եղաւ՝ երբ իմա-  
ցաւ, որ նա արդէն գնացել է Խաչէն իր հարս-  
նացուի մօտ։

— Բ'չը... մի փոքր մտածմունքի մէջ ըն-  
կաւ, — ի՞նչժամանակ էր հարսնացուի մօտ գնալու,  
երբ թշնամին դրան առաջ կանգնած մահ է  
սպասնում մեզ, չլինի թէ՝ սա մի պատրւակ է։

Նա շտապեց Զօրայրի մօտ. Զօրայրը սովո-  
րութիւն ունէր առաւօտը կանուխ վերկենալ ու  
զբաղւել պաշտօնական գործերով։

Գիւղացիները զլիին հաւաքած վճռում էր  
նրանց վեճերը, նա անկողմնապահ էր և արդա-  
րադատ, քիչ էր պատահում որ գանգատողները

գնային բաւարարութիւն չ'ստացած. ժողովուր-  
դը նրան երկրորդ Սողոմոն էր անւանում։

Զօրայրը չէր սպասում, որ Վահրատը սո-  
վորականից այդպէս վաղ կ'զար այցելութեան։

— Վահրատ ջան, ի՞նչ վաղ ես վերկացել, —  
Զօրայրը շատ էր սիրում Վահրատին և միշտ էլ  
ջանով էր խօսում նրա հետ։

— Գիշերս վատ եմ քնել, համարեա թէ չեմ  
քնել, — անհանգիստ կերպով ասաց Վահրատը։

— Ի՞նչո՞ւ, — հարցը նա աչքը չը հեռացնե-  
լով մի հաստափոր զրքից։

— Է՞հ, մախլաս, — ասաց և սկսեց յուզւած  
անց ու դարձ անել։

— Սպասիր, այս ըոպէիս գալիս եմ, — զիրքը  
փակեց ու շտապով դուրս գնաց, իսկ Վահրատը  
նոյնպէս զուրս եկաւ ու սկսեց գիւղացինե-  
րի հետ խօսք ու զրոյցի բռնւել. ահա, այդ  
ժամանակ բազմութիւնը ճեղքելով առաջ անցան  
երկու գիւղացիք՝ քրտնքի ու թողի մէջ կորած։

— Իշխան Զօրայրը տամնն է, — հարցը մէկը  
նրանցից չը նկատելով Վահրատին։

— Ի՞նչ էք կամենում, եթէ չեմ սխալում  
դուք երկուսդ էլ Խաչենցի պէտք է լինէք, — ա-  
սաց Վահրատը։

— Հա, հրամել ես, արեիդ մեռնեմ, — վրայ  
քերեց միւս գիւղացին, վերցնելով զլիից փա-  
փախը և սկսեց վզակոթը քորել։

— Գալներդ բարի, ի՞նչ կայ, չէք հանդիպել  
իշխան Վարոսին Խաչենում, — հետաքրքրութեամբ  
հարցը եց Վահրատը:

— Ոչ, մենք գիշերս ենք հլու եղել, — ասաց  
պատգամաւորը, գլխարկից հանելով մի փաթա-  
թած մագաղաթ:

— Եդ ի՞նչ նամակ է, — ձեռքը մեկնելով նա-  
մակին հարցը եց նա:

— Իշխան Արուշանիցն է, — և տւեց նամակը:

— Տեսնեմ. — հէնց այդ ժամանակն էլ դուրս  
եկաւ Զօրայրը. — քեզ վրայ նամակ կայ, եղ-  
բայր, — ասաց Վահրատը:

Զօրայրը մի հայեացք ձկեց նըանց վրայ և  
ասաց. — Գալուստաներդ բարի, ի՞նչ կայ. — Նամա-  
կը բաց արեց:

— Իշխան Արուշանն է ուղարկել, — ասաց  
Վահրատը:

— Հա, արեիդ մեռնեմ, իշխան Արուշանիցն  
է, ասաց քաշւելով նամակաբերը:

— Ի՞նչ կայ, — ցածը ձախով հարցը եց Վահ-  
րատը, տեսնելով Զօրայրի յուզմունքը:

— Գրիգոր, տար սրանց հաց տուր, ասաց  
հանգստութեամբ Զօրայրը ու Վահրատի ուսից-  
բռնելով տարաւ ներս սենեակը:

— Իշխան Արուշանը գրում է, որ Ալի խա-  
նը մեծ զօրքով գալիս է մեզ վրայ պատերազմ. —  
Նամակը ծալելով տխուր նստեց թախտի վրայ:

— Մի՛թէ, — մտածմունքի մէջ ընկնելով կանգ-  
նած մնաց Վահրատը:

— Վահրատ ջան, գործը լուրջ է, էլ չ'պէտք  
է ուշացնել, պէտք է խորհուրդի կանչել իշխան-  
ներին և քաղաքացիներին. գնա զզիրներին կան-  
չիր այստեղ:

Վահրատը շտապով դուրս եկաւ սենեակից  
ու ինքը հրամայեց որ շուտ գնան իշխաններին  
կանչեն, իսկ Զօրայրը վերկացաւ տեղից որ դուրս  
գայ, բայց Վահրատը ներս եկաւ:

— Վահրատ ջան, Վարոսը չի երևում, չը  
լինի թէ հիւանդացել է, — խորհրդաւոր, մի փոքր  
էլ հեգնական կերպով հարցը եց Զօրայրը:

— Նա ուրիշ հիւանդութիւն ունի:  
— Տեսել ես...

— Գնացել է Խաչէն:  
— Խաչէն:

— Ասում են հարսնացուի մօտ:  
— Զլինի դա պատրւակ է ու գնացել է մի-  
այլ տեղ:

— Ի՞նչ ասեմ, սիրելիս, ես կասկածում եմ  
նրա անկեղծութեան:

— Կարծում ես վատ մտքեր են յղացել  
նրա սրտում:

— Այսո...  
— Դաւադրութիւն՝ հա...  
— Կարծում եմ:

Այս խօսքերը ծանր տպաւորութիւն թողին  
Զօրայրի վրայ.—Տեսէլ ես այն դէպքից յետոյ:

—Գիշերս խիստ ընդհարում ունեցայ նրա  
հետ:

— Յետոյ... անհամբերութեամբ հարցրեց  
Զօրայրը:

— Նոյն խօսքն էր շեշտում թէ՝ պէտք է ըն-  
դունել Ալի խանի պահանջները:

—Բայց դու չ'հասկացրի՞ր այդ տըխմարին,  
որ այդ պայմաններով մենք մեր ձեռքով կոր-  
ծանում ենք մեր հայրենիքի ապագան և նրա  
գոյութիւնը, ապա էլ ի՞նչու ենք ապրում... Ոչ,  
թող Ալի խանը իր ձիով անցնի իմ դիմակիս վրայ,  
բայց ես թոյլ չեմ տայինձայդախիսի ստորացուցիչ  
պայմաններով խաղաղութիւն կնքել: Ասաց ու  
վրդոված վերկացաւ թախտից ու սկսեց անց ու  
դարձ անել սենեակում:

—Նրա գլուխը ոչինչ չի հասկանում ինչ-  
պէս այս սիւնը,—ասաց Զօրայրը ձեռքով խփե-  
լով սիւնին:—Ես չեմ հասկանում դրան...

— Սատանան անգամ չի հասկանայ դրան.  
հէնց թէ այն է կրկնում, «Ես անդորրութիւն  
եմ կամենում և ոչ թէ արիւն թափել»:

—Բայց՝ նվ է ուզում, —յուզւած ասաց Զօ-  
րայրը:

— Ո՞վ, ես, ես որ միշտ էլ հակառակ եմ  
եղել այդ բանին և երդւում եմ, Վահրատ, ես

երբ սուր եմ մերկացնում ու խփում մէկին ու  
մահացու վէրք եմ բացում ու գոլորշիացած ա-  
րիւնը ժայթքում ու վիրաւորը ուժասպառ դա-  
լարւելով գետնի վրայ այս ու այն կողմն է նետւում  
ու տենդով բռնւած բերանը պապակւած ջուր է  
խնդրում, ոհ, սիրտս կտոր-կտոր է լինում՝ խիղ-  
ճը տանջում է, չէ՞ որ նա էլ ինձպէս մարդ է,  
ոհ, ես նզովում եմ այն մարդակերպ գազան-  
ներին, որոնք պատճառ են դառնում մարդկա-  
յին սպանդանոցի, ես գարշանք եմ զգում դէպի  
այդ հրէշները... Այս ասաց ու յուզւած նստեց  
թախտի վրայ գլուխը ձեռնափերի մէջ առնելով  
և մի փոքր լառութիւնից յետոյ գլուխը բարձրաց-  
նելով նոյն յուզւած ձայնով՝ ասաց. — Եթէ՝ ես  
սուրս եմ մերկացնում, այդ միայն հայրենիքիս  
ինքնապաշտպանութեան ու ազատութեան խըն-  
դիրն է և ոչ թէ երկիրներ տիրելու տենչանք...

— Ես ևս պախարակում եմ մարդասպանու-  
թիւնը, բայց արի հասկացը ու Ալի խանի պէս  
գաղաններին: Դուռը թակում են:

— Երկի իշխաններն են, բաց արա:  
Վահրատը իսկոյն վերկացաւ ու շտապեց  
դէպի դուռը, — նրանք են:

Շատ չանցաւ և հրաւիրեալները բոլորն էլ  
հաւաքւեցան մեծ սրահում և իւրաքանչիւրը ի-  
րանց աստիճանի համաձայն նստեցին ժողովի:  
Ժողովը բացեց Զօրայրը, ինչպէս ուրիշ

անգամ՝ այնպէս էլ այժմս վերին աստիճանի հանգիստ ու անվրդով։ Նա կարդաց Արուշանի ուղարկած թուղթը, որտեղ յիշում էր, թէ Ալի խանը մեծ զօրք հաւաքած՝ երդւել է, որ մինչ վերջին մարդը պէտք է ոչնչացնի՝ եթէ չընդունեն նրա պայմանները։ Ժողովը շատ աղմկալից էր, բոլորն էլ ի մի դարձած պահանջում էին շուտով զօրքը ոտքի հանելու և ամրացնելու դիրքերը։ Քաղաքացիներին ու գիւղացիներին զէնք բաժանել ինքնապաշտպանութեան համար։ Զօրայրը, որ միշտ էլ իր քաջութեամբ ու խելքով ամենից աշքի էր ընկնում, նրան յանձնեցին ընդհանուր զօրքի հրամանատարութիւնը։

—Իշխան Զօրայր, նրքան զօրք կայ պատրաստ քո թեկի տակ, —ասաց ծերունի Տէր-Ներսէս քահանան։

—Ընդամենը 6000 կտրիճներ, որից 2000-ը ձիաւոր են, —ասաց Զօրայրը։

—Իշխան, ներիլ համարձակութեանս, աղդեօք կարող ենք դիմադրել այդ փոքրաթիւ զօրքով թշնամու բանակին, —ասաց դիտաւորեալ կերպով Վարոսի թիկնապահներից մէկը։ —Արդեօք չէր կարելի մի այլ միջոց գտնել որ խաղաղութեամբ վերջ տայինք այդ մեծ դըժքաղտութեան։

—Ուրիշ ոչ մի ելք, բացի բերդը յանձնելուց թշնամուն, —ասաց լրջութեամբ Զօրայրը։

—Այդ անհնարին է, —ասաց երիտասարդ զինւորներից մէկը։

—Իսկ եթէ մի որոշ հարկ տայինք, իսկ երկիրը դարձեալ մենք կառավարէինք, թէ չէ այս փոքրաթիւ զօրքով ինչ պէտք է անենք, —ասաց Վարոսի թիկնապահը։

—Առաջին հարցը ինքնախարէութիւնն և միամտութիւն կ'լինէր մեր կողմից, ձեզ օրինակ վրաց իշխանութիւնը, որոնք համաձայնեցան հարկ վճարելու, բայց վերջը քիչ էր մնում թագն էլ յափշտակեցին գլխից, իսկ երկրորդ հարցին կասեմ, որ մեր նախահայր Հայկ Նահապետը 300 մարդով ջարդեց Բէլի անթիւ զօրքը, չէ՞ որ մենք նրա որդիքն ենք, մի տարի առաջ ցոյց տըւինք թէկ թւով քիչ, բայց քաջութեամբ տասնապատիկ աւելի, չէ՞ որ նոյն Ալի խանն էր, ասաց յատուկ հերոսին վայել վստահութեամբ։

—Օքննեալ լինիս, որդի, թող Աստւած օրհնի քեզ և քո քաջերիդ, թող նա լինի քո նեցուկն ու վահանը, —ձեռքերը ծերունի Մովսէսի պէս բարձրացրեց դէպի վեր և սկսեց ինչ-որ մըմնջալ։

—Ես մենակ ինչ կարող եմ անել, տէր հայր, իմ յոյսս մեր ժողովուրդն է և մեր նախախնամողը և դուք իշխաններդ, ասաց Զօրայրը։

—Մենք քեզ հետ ենք՝ ուր ուզում ես

տար,— գոչեցին միաբերան ժողովականները:—

Շատ ծերունիների աշքից արտասուք էր թափւում, ոգևորութեան չափ չկար:

— Յարգելի ժողովականներ, մենք ոչ մի ասիթ չենք աւել մեր թշնամուն, որ նա ստիպւած լինի զէնքի դիմելու, մենք միշտ աշխատել ենք բարի դրացիութիւն պահպանելու մեր հարեան ազգերի հետ և աւելի զիջողաբար ենք գտնել ընդհանուր շահերի տեսակէտով. աւելի նրանք են օգտւել քան մենք. բայց որովհետեւ մեր թշնամին արիւնարբու է ու անհաշտ, ուզում է արիւնինեղութիւն, նրա հոգին յագենում է արիւնով միայն, թող գայ, մենք վախենալու ոչինչ չունենք, քանի որ մեր գործը արդար է, իսկ Նախախնամութիւնը միշտ արդարի կողմն է:

Ժողովուրդը ոգևորւած Զօրայրի խօսքերից, միաձայն գոչեցին, — կեցցէ իշխան Զօրայրը, կեցցէ մեր զօրքը և զօրապետները:

Շնորհակալութիւն յայտնելով ժողովրդի անկեղծ արտայայտութեան համար, յայտարարեց.

— Վաղը թող ժողովուրդը հաւաքւի Վահագնի հրապարակում, — իմանայ պատերազմի յայտարարութիւնը:

Ժողովը ցըւեց շատ մեծ ոգևորութեամբ, մնացին միայն Վահրամը, իշխան Ժիրայր-Խաչենցին, Վաղարշ Երևանցին, Միհրան և Դրատամատ Շահենցիք, սրանք բոլորն էլ կտրիչ,

քաջարի և հմուտ զինւորականներ էին, Ամբողջ գիշեր խորհեցին իրանց գործելակերպի մասին ու զանազան մակարդակներ առաջարկեցին, բայց զինւորական վճիռը մնաց գաղտնիք:

Լուսադէմ էր արդէն, երբ սրանք ևս ցըւեցին իրանց տները: Զօրայրը դեռ ոտքի վրայ էր, կանչեց իւր զինակիցներից մի քանիսին և պատէր տւեց, որ գնան զիրքեր մտնեն և հետամուտ լինեն թշնամուն, իսկ մի քանիսն էլ ծպտեալ կերպով լրտեսեն թշնամու բանակը:

Իրանք բոլորն էլ կազմ ու պատրաստ էին և մինչ արեկի ծագումը ձիաներ հեծան և մէկ ակնթարթում անյայտացան.. զիշերւայ մթութեան մէջ: Զօրայրը մտաւ իր ննջարանը:

Նրա գլուխը պաշարել էին հազար ու մի տեսակ մտածմունքներ. նա լաւ էր հասկանում իր ստանձնած պաշտօնի ծանրութիւնը, նա խորասուզած ծով մտածմունքների մէջ նստեց թախտի վրայ ու գլուխը դրեց բարձի վրայ. քանիցս ծերունի հայր ու մայրը խնդրեցին որ շորերը հանի ու պարկի, բայց նա մերժեց, ասելով. — ինչպէս հանեմ շորերս, երբ թշնամին կարող է ամեն մի յարմար ժամին երկալ մեր սահմաններում ու կարող է վտանգ սպաննալ:

— Կուրանայ մօրդ աչքերը, որդիս, այդքան չարչարանք կ'լինի՞ որ դու ես քաշում,—

ծնկներին խփելով ասաց ծերունի իշխանուհին:

—Այսպէս է մեր կեանքը, մայրիկ, —ինչ անես, հայրենիքի արժանապատռութիւնը մեզանից այդ է պահանջում, Եթէ ես չլինեմ, նա չլինի, Վարոսի պէս անպէտքները խօմ չեն կարող հայրենիք պաշտպանել, —այս վերջին խօսքերը ուղղակի ցնցեց մօր սիրտը:

—Ա՛, կնիկ, գնա գործիդ, պատերազմի գործը կնոջ գործը չէ, գնա գուլպադ գործիր, —ասաց ծիծաղելով ալեորը:

—Լսում ես, Զօրայր, ի՞նչ է ասում հայրդ, ապա ով էր Խրամի կուռւմ քո ազատողը, ես չէի որ շալակած մէջքիս ջրի միջով անցկացրի ու վէրքերդ կապեցի, մոռացար համ, —վիրաւորւծ ասաց ծերուկը:

—Կեցցէ մայրիկս, արի մէկ համբուրեմ, —Զօրայրը գրկեց մօրը ու համբուրեց:

—Այս, ճշմարիտ է ասում մայրդ, —ասաց ծիծաղելով ծերունի իշխանը:

—Դու ծիծաղիր, մոռացար համ... աւելի բորբոքւած ասաց իշխանուհին:

—ԶէԷ, մոռանալ չեմ կարող, —ասաց լրջութեամբ ծերուկը:

—Յիշում ես երբ Միքզա խանին իր ձիուց քաշեցի ներքեւ, խլեցի սուրը ու սիրտը կոխեցի. կասես այդ էլ սուտ է, որ մէկը պատմեմ,

—գրգուած ու փայտը յատակին խփելով ասաց իշխանուհին:

—Ապա, մայրիկ, —զլուխը բարձրացրեց Զօրայրը, —ինչու Վարոսը ոչ մէկիդ նման չէ:

—Է՛ մի ասիր, որդիս, —ծնկներին խփելով ասաց մայրը: —Նա որ ստեղծւել է՝ մեզ համար ցեց է ստեղծւել, —ասաց սրտի ցաւով մայրը:

—Է՛հ, ա կնիկ, գնանք, թող քնի, —փեշից քաշելով ասաց ծերունին:

—Մայրիկ, Վահրատը ասում է, որ նա զնացել է Խաչէն իր հարսնացւի մօտ, ուղիդ է... քնի մէջ խարխափելով ասաց Զօրայրը:

—Ինձ էլ ասաց, —ցածը ձայնով և երեսը կողմը շուռ տալով ասաց մայրը:

—Ես մարդ եմ ուղարկել Խաչէն, որ շուտով վերադառնայ, —հաղիւ վերջին խօսքելն ասաց և քունը յաղթեց նրան:

—Ա՛, կնիկ, թող քնի, գնանք, —հաղիւ լսելի ձայնով ասաց ծերունի իշխանը, Երկուսն էլ զլուխը տմբտմբացնելով հեռացան: Նրանց հեռանալուն պէս ներս մտաւ Սէդան. Նա մատների ծայրերի վրայ շատ զգուշութեամբ մօտեցաւ ու թիկունքը վերմակով ծածկեց:

Զօրայրը որ սովորել էր, որպէս զինւորական արթուն քնելուն, մինչև անզամ ճանձի

տըզզոցը, մի թեթև շնչառութիւն, — բաւական էր որ զարթնէր:

Զօրայրը զգալով, որ իր մարմի հետ մի շփում եղաւ, իսկոյն աչքերը բացեց, տեսաւ որ իր կինն է կանգնած մօտը:

—Այս, դու ես, Սէդա, քաղցրութեամբ ձեռք մեկնեց նրան: —Նստիր մօտս, իմ հոգէհատորս, —նա նստեց, բայց լուռ ու մունջ թէ ինչ էր զգում նրա հոգին, այդ միայն կարող է սիրող կնոջ սիրտը զգալ մօտալուտ վտանգի արհաւիրքը: Սա տիսուր ու անթարթ նայում էր Զօրայրի աչքերին:

Տղամարդը որ աւելի ուժեղ է վտանգի ըռպէին, բռնեց Սէդայի ձեռքից և ասաց.

—Սէդա, դու տիսուր ես, նա քաշեց նրա գլուխը ու կպցրեց իր կրծքին ու համբուրեց նրա զոյգ աչքերը, —մի լար, անգին ընկերս:

—Ուրախանալու ինչ ունեմ, — արտասուելով ասաց Սէդան, ու քնքշութեամբ ձեռք դնելով նրա ճակատին սկսեց ուղղել վրայի թափւած մազերը:

—Այս, դու իրաւունք ունես արտնջալու մեր ճակատագրի վրայ, որ քիչ են եղել մեր կեանքի մէջ բաղտաւոր ժամեր, բայց այն մի քանի երջանիկ ժամերն էլ մեզ կեանք են ներշնչել: Հէնց այն օրից, երբ բաղդա կապեցի քո բաղդի հետ, կարծես թէ դու, որպէս մի լուսա-

տու աստղ առաջնորդեցիր ինձ դէպի յաջողութիւն: Քո սէրն էր, որ ինձ ոգեորում էր կուի ահեղ ճակատամարտերում ու յաղթութեան դափնիներ բոլորում ճակատիս: Եւ հազիւ մի վըտանգն անցած՝ միւսն է գալիս և իմ անմիսիթար հայրենիքս իմ վրաս յոյս գնելով, կանչում է ինձ նորից և ես պիտի գնամ իմ սրբազն պարտքս կատարելու, թող թէ կեանքս անգամ վտանգի: Սակայն, նախքան այդ պարտքս կատարելը մի պարտականութիւն եմ դնում քեզ վրայ, լաւ պահիր իմ արծւիկներիս, մեր երջանկութեան գրաւականներին: Թող մեր երեխաները լինեն ուժեղ բայց ոչ կոպիտ, բնաւորութեամբ մեղմ բայց հաստատամիտ, թող լինին համբերատար բայց վճռական, թող բարձր պահեն իրանց հայրենիքի արժանապատութիւնը, որը խիստ պակասում է մեզ հայերիս: Թող վեհանձն լինեն դէպի տկարները, թող սիրով վերաբերւեն դէպի մարդը, թէկուզ թշնամին լինի նա:

Զօրայրի խօսքերից զգացւած արտասուքը աղբիւրի պէս էր թափում Սէդան, բայց նա զսպում էր իրան ու վախենում էր որ իր վարմունքով թուլացնի նրա կամքի ոյժը, ուստի նա սրբեց աչքերը, զլուխը բարձրացրեց ու հըպարտօրէն ասաց:

—Զօրայր, մենք ամուսնագանք սիրով և սի-

բով էլ պիտի մեռնենք, կուի ահեղ ճակատում լինի, թէ խաղաղ յարկի տակ, մինոյն է ինձ համար. Եթէ որևէ է փորձանք պէտք է պատահի քեզ հետ, ես չեմ կարող ապրել...

—Ո՞չ, դու պէտք է ապրես քո զաւակների համար—խօսքը կարեց Զօրայրը:

—Մենք շունչ ենք քաշում քեզանով, ու կեանք ստանում քեզանով, որտեղ դու կ'լինես՝ մենք էլ այստեղ,—ասաց հալարտօրէն Սէդան:

Ինչպէս կարող էր չ'ոգնորւել մի հերոս, երբ մի քնքոյշ արարած այդքան ինքնազոնութեամբ մոռանում է իր կանացիութիւնը ու ամուսնու հետ խիզախում դէպի ահեղ կուի ճակատամարտը:

Այո, կնոջ գերը մեծ է կեանքի ահեղ կոիւներում, նա է կեանքի դեկը շարժում ու փրկում մեզ անկումից: Սէդան, միշտ էլ ձիու վրայ նստած անբաժան է եղել ամուսնուց ու ոգնորել է հայ քաջերին վասնգի ժամին:

Սէդան գրկեց Զօրայրին, համբուրեց նրա ճակատը, վերմակը ուղղեց մէջքին ու քաղցրութեամբ ասաց, — քնիր, քաղցր ընկեր, հանգստացիր:

Դեռ խօսքերը չ'վերջացած՝ ներս մտաւ մայրը ու ցածր ձայնով հարցրեց.

—Քնեց...

—Քնեց, մայրիկ.—մի փոքր լոսութիւնից

յետոյ ասաց.—մայրիկ, լուսանում է, խեղճուկըս, գնա, հանգստացիր:

—Քնել... երկի, ինձ սպասում է յաւիտենական քուն,—ծանր ախ քաշելով ասաց ծերուկը:

—Ի՞նչ ես ասում, մայրիկ, ասաց Սէդան վախենալով նրա նախազգացումից:

—Դուք ապրէք, որդիքս, իմ հայ-հայս գնացել է, վայ-վայս մնացել և այդ օրը հեռու չէ ինձանից, ասաց տիրութեամբ ծերուկը. չէ որ մարդուս հոգին ընդունակ է գալոց օրերը գուշակելու:

—Ինչպէս, մայրիկ, դեռ դու պէտք է ապրես և մեզ համար աղօթք անես:

—Ես այնպիսի երազներ եմ տեսնում, որդիս, որ անկարելի է որ չ'կատարւի, — ցածր ձայնով ասաց ծերուկը ու տիրուր քայլերով հեռացաւ: Իսկ Սէդան բարձը քաշեց գլխի տակ ու քնեց:

Լուսացաւ: Արեի ճառագայթները երդիկից ներս էր ցոլացել սենեակը, ճրագի վերջին աղօտըն էր մնացել՝ նա էլ մօտ էր հանգչելու: Զօրայրը գլուխը բարձրացրեց, տեսաւ Սէդան բաց առանց վերմակի քնել էր, վերցրեց իր վերմակը ու շատ զգուշութեամբ ծածկեց ու կամաց գուրս գնաց:

Ծերունին ծերուկի հետ տըմբալմբալով դա-

լիս էին եկեղեցուց, — «Ողորմի Աստւած» ասացին ու բարձրացան սանդուխտները:

Թիկնապահ զինւորները տեսնելով իշխան Զօրայրին՝ մօտ շտապեցին, բարե տւին ձեռք բարձրացնելով ու գլուխը խոնարհեցրին ու կանգնեցին լուռ իրանց տեղերը, սպասելով հրամանին:

—Ի՞նչ կայ, Զօհրատ, — հարցրեց նա իջնելով սանդուխտից:

Զօհրատը առաջ մօտեցաւ և ասաց.

—Դեռ ևս խաղաղ են դիրքերում, իշխան:

—Դուք որտեղ էիք կանգնել, — ասաց Զօհրայրը:

—Եթոնաց վերին ծմակում, — մատով ցոյց տւեց Զօհրատը. Նա մի յաղթանդամ տղամարդ էր:

—Դնա Միհրանին ասա, որ աւագանների ջուրը բաց թողնի, լաւ մաքրի ու ջրով լքցնի: Լեռն, դու էլ գնա յայտնիր քաղաքացիներին և գիւղացիներին, որ ջրի պաշար վերցնեն, չ'լինի թէ թշնամին ջուրը կտրի: Իսկ դու, Սարիբէգ, առ տղերանց ու գնացէք դիտեցէք մեր դիրքերը: Դու էլ Մասրատ, փողեր հնչեցրու, որ զօրքերը հաւաքւեն:

Զանցաւ շատ ժամանակ ձիաները չափ գցելով մտան հայեաթը — Դաւիթ կատակասէր իշխանը, իշխան քաջամարտ Ժիրայրը, հսկայ իշխան Դրաստամատը, երկաթամարդ Թանդիլը, Մըրատ

առիւծասիրտը, թռան ձիաներից, բայց ձիաներ եմ ասում՝ աստղերի հետ էին խաղում ու մի ակնթարթում 100 օրավար երկարութեամբ թըռչում ու սմբակ խփած տեղը թորոնի չափ տեղ էր բացւում ու թողից արել խաւարում: Ծառաները իսկոյն և եթ ձիաների սանձից բռնած սկսեցին մանածել: Թամբեր ու ասպանդակները բոլորն էլ արծաթ ու ոսկու մէջ էին զարդարւած: Իսկ իրանք քուլաջաները հազին ու ոսկէջրած սուրն ու թուրը ու ոսկէ գոտիկը կապած, ատլասէ արխալուխներն ու լայն անդրավարտիկները ու սպիտակ կօշիկներ ոտին:

Եկան նաև ծերուկ Թորգոմ իշխանը ու Վահրատը: Երիտասարդ իշխանները տեսնելով ծերունի Թորգոմին՝ բոլորն էլ ոտքի կանգնեցին ու խոր գլուխ տւին ու բոլորն էլ իրանց տեղերը նստեցին:

Նախաճաշիկի պատրաստութիւնը արդէն տեսնեած էր. կապոյտ սփոռոցը զցեցին թախտի վրայ, կապոյտ բարակ ափսէներ — ոսկէզօծ ծաղիկներ նիշշած՝ դարսեցին ամեն մինը մէկի առաջ, թարմ ամեն տեսակ կանաչին կողովներով, կէս-կէս կտրտւած թոնրի սպիտակ հացեր ու լաւաշը, մի քանի կտոր պանիր, երկու գեղեցիկ խելագաներով կարմիր զինի, խրամուլ, գօշն ու զուրգելը: Իշխանները հանեցին իրանց զէնքերն ու կաբաները, թռան թախտի վրայ,

բարձերը քաշեցին տակները ու ծալապատիկ  
նստեցին: թաւով մօտ բերեցին խորոված ամ-  
բողջ գառը:

Դաւիթը հանեց սրաընկերն ու սկսեց կըտ-  
րատել գառը, իսկ իշխան ժիրայրը հազար փե-  
շան լքցրեց գինով ու համեցէք արեց ծերունի-  
թորդոմ իշխանին: Նա օրհնեց բոլորին ու աշ-  
քերը դէպի վեր բարձրացնելով մըմնջաց.—  
Տէր Աստւած, այս անգամն էլ օգնիր և ոյժ ու  
կարողութիւն տուր իմ քաջերիս:—Ամենքը միա-  
բերան գոչեցին—Ամէն:

—Զօրայր, ի՞նչ ես մտածում, կէր, եղբայր,  
փորը իր հաշիւն ունի՝ պատերազմն իրանը, մի  
վախիր, գտակներս տափին չենք տալ, —մեծ ոս-  
կորը կըծելով ասաց Դաւիթը:

—Ես կուից չեմ վախենում, այլ վատ մարդ-  
կանց դաւադրութիւնից, —հազար փեշան վայր-  
դնելով ասաց նա:

—Երկի խօսքդ Վարոսի համար է, ասաց  
գլուխը թափ տալով Ժիրայրը:

—Հա, ուղիղ, չի երկում, —ասաց Միհրանը:  
—Երկի Ալի խանի մօտ տոլմա ուտելու է  
գնացել, —ասաց ծիծաղելով Դաւիթը:

—Այ, քթիցը դուրս գայ, —ասաց Դրաս-  
տամատը:

—Հողը Ալի խանի գլխին, որ այդպիսի երկ-

չոտ նապաստակների վրայ է յոյս դնում, —ա-  
սաց Թանդիլը:

—Ի՞նչ կարող է Վարոսն անել, —ասաց Միհ-  
րանը:

—Ոչինչ, —ասաց Թանդիլը:

—Էն է մուրտառ մուկ է, —ասաց Ժիրայրը  
ու գանակի ծայրին հագցրած խորովածի կտորը  
համեցէք արեց ծերունի թորդոմին, իսկ Թոր-  
դոմը նախքան վերցնելը ձեռքին խփեց ու շնոր-  
հակալութիւն յայտնեց:

Նախաճաշիկը վերջացնելով, Զօրայրը բո-  
լորին հրաւիրեց դահլիճ:

—Եղբայրներ, ես ուզում եմ ներկայացնել  
մեր ունենալիք պատերազմի մակարդակը, որը  
հետեւալն է. մենք պէտք է նախ աշխատենք, որ  
Ալի խանին քաշենք Խրամի այս ափը և երբ  
անցաւ, ապա պէտք է Թալիշ խանի ճանապարհը  
կտրել, որ չըկարողանայ միանալ Ալի խանի զօր-  
քի հետ: Դու Ժիրայր, Դրաստամատի, Թանդիլի  
ու Միհրանի հետ կանցնէք Թալիշ խանի ձախ-  
թեր, նախօրօք ձեր դիրքը ծածկելով Դարդանց  
անտառի այն բլրի յետելը:

—Դաւիթ, դու Սմբատ բէզի և Սարօյի հետ  
աջ թեր կ'ըռնես: —Գիտեմ ուրախ կ'լինէք, Սա-  
րօն եկել է:

—Այդ լաւ եղաւ որ Սարօն եկել է, —ասա-  
սացին բոլորեքեան ուրախութեամբ:

— Կուի սատանան\*) եկաւ, — ասաց Դաւիթը:  
 — Ես կ'կանգնեմ կուի ճակատում, ինձ հետ  
 կ'ունենամ իշխան Մամիկոնին, Սուրէնին, Վահ-  
 րատին, Բագրատին։ Դուք ծածկւած կ'հետեւէք,  
 ես պաշտպանողական դիրք կ'բռնեմ և կամաց-  
 կամաց հետ քաշւելով առաջ կ'քաշեմ դէպի ձո-  
 րը ու շտապով Ալի խանին իր զօրքերով կ'անց-  
 կացնեմ կամուրջը. Երբ կամուրջն անցնի, դուք  
 ժամանակ չ'տաք Թալիշ խանին որ միանայ Ալի  
 խանի հետ, կտրեցէք աջ ու ձախ թերը, քան-  
 դեցէք կամուրջը և այս ամենը պիտի կատարւի  
 արագութեամբ և շարքերը խիտ պահպանեցէք  
 և հէնց որ Թալիշ խանը մտաւ ձորը՝ ապա վրայ  
 աւէք. մի բան մեզ աջակցում է. դա Խրամի վա-  
 րաբելն է, որ ոչ մի ձիաւոր չի կարող սրնթա-  
 ցութիւնը կտրել։ Լաւ իմացէք, Ալի խանի զօր-  
 քի մեծ մասը Ղարափափախներից է կազմւած,  
 որոնք իրանցից ոչինչ չեն ներկայացնում՝ երբ  
 դրանց ջարդէք՝ Ալի խանը իմ ձեռքումս է։ Դուք  
 շտապեցէք նոր կամուրջով, որի գոյութիւնը յայտ-  
 նի չէ թշնամուն, կանցնէք վերևի կողմից, որ-  
 տեղ մենք կ'միանանք։ Ծուղակի մէջ ընկած Ալի  
 խանը կամ պէտք է զէնքը վայը դնի կամ թէ  
 մինչ վերջին մարդ զո՞ն բերի։

\*) Զանազան կուի հնարքների համար այդ կո-  
 չումն էր ստացել։

— Ես կարծում եմ, Թալիշ խանը վերևի կող-  
 մից չի գայ, որովհետև նրանք իրար կ'խանգա-  
 րեն և Ալի խանը չի կարող իր զօրքը ազատ  
 շարժել, — ասաց լրջութեամբ Դաւիթը։

— Աւելի լաւ, ուրեմն աւելի հեշտութեամբ  
 կարող ենք զօրքի կամը կտրել, — ասաց Ժիրայրը։

Հէնց այդ ժամանակն էլ ներս եկաւ իշխան  
 Սարօն. ուրախութեան չափ չ'կար, նա համբուր-  
 ւեց Զօրայրի ու միւսների հետ։

— Ինչպէս ճանապարհորդեցիր, ինչպէս են  
 մեր վրացի եղբայրները, տեսնեցար Թեմուրազ  
 խանի հետ, հանգիստ է նրանց երկիրը, իշխան-  
 ների ու թագաւորների մէջ վերջացել է անբա-  
 ւականութիւնները, — ամեն կողմից թափւեցին  
 հազար ու մի հարցմունքներ։

— Տեսնեցայ Թեմուրազ խանի հետ. գրա-  
 մասին յետոյ կ'խօսենք. անբաւականութիւնն ու  
 խոռվութիւնը իրար մէջ ծայրահեղութեան է հա-  
 սել, փոխանակ թշնամու առաջն առնելու, նրանք  
 իրար հետ են կռւում, դրութիւնը շատ վատ  
 է, — ցաւակցելով ասաց Սարօն։

— Տեսնում ես, մենք էլ պատրաստում ենք  
 Ալի խանի դէմ, դու հոգուն վրայ հասար, — ա-  
 սաց Զօրայրը։

— Էլի կատաղել է այդ աւազակը, ախ, մի  
 լաւ կոթակ և ամեն հաշիւ վերջացած կ'լինի դլ ա-  
 հետ, — կրծքին խփելով ասաց Սարօն։

— Աարօ, դու կ'միանաս Դաւթի հետ, նա  
քեզ կ'բացատրի ամբողջ մեր պատերազմի մա-  
կարդակը, — ասաց Զօրայրը:

— Շատ ուրախ եմ, կ'աշխատեմ արդարաց-  
նել իմ վրայ դրւած պարտականութիւնը, — ա-  
սաց Սարօն:

— Մենք չենք կասկածում քո պատերազ-  
մական ճարպիկութեան վրայ, — ասաց Ժպտերես  
Զօրայրը:

— Իմ բոլոր հնարագիտութիւնս կ'թափեմ  
թշնամու ձեռքից յաղթութիւնը խլելու համար,  
— ասաց Վստահութեամբ Սարօն:

— Ուրեմն ունէք բան ասելու այս մակար-  
դակի դէմ, — ասաց Զօրայրը դիմելով բոլորին:

— Ոչ մի բան, — ասացին բոլորեքեան ու  
ձեռք բարձրացրին, որ նշան էր համաձայնու-  
թեան:

Դեռ ևս պատերազմական խորհուրդը շա-  
րունակում էր իր նիստը, երբ լուեց պղնձէ  
փողերի ձայները:

— Այս ի՞նչ ձայներ են, — ամենքը շտապե-  
ցին դէպի դուռը:

— Մեր զօրքն է, — ասաց Զօրայրը: Դէն,  
ժամանակ է, ամեն մէկդ անցէք ձեր դուռդի  
գլուխը զինավարժութիւն կատարելու ու ամեն  
մէկին հասկացնելու իրանց անելիքը: Բոլորն էլ  
շտապով դուրս եկան:

Զօրքերը ամեն կողմից հաւաքւեցան կոչ բլրի  
տակ. զօրքի տրամադրութիւնը շատ լաւ էր, ոչ  
մէկի երեսին տիրութիւն չէր երևում:

Բոլոր զօրապետներն անցան իրանց զօրա-  
մասերի գլուխը, սկսեցան զինավարժութիւն-  
ներ, երիվարները այնպիսի թոփչքներ, ոստումներ  
էին կատարում զանազան արգելքներով, վերվար,  
ձիուց թոշում, վեր բարձրանում և այնպիսի վար-  
ժութիւններ կատարում, որ զարմանք էր պատ-  
ճառում ամենքին. իսկ սուր շարժելը այնպիսի  
արագութեամբ էր կատարւում, որ աչքն էր  
շշմում, — հէնց այդ է պատճառը, որ հնում  
Հոռմայեցիք անգամ վախենում էին հայոց այ-  
րութիւնց: Զօրքը 4—5 ժամ պատերազմական  
մարզանքներ կատարելուց յետոյ հանգիստ տը-  
ւին: Ամենքն էլ թողից ու արեից խաշւած՝ շտա-  
պեցին իրանց կարգի բերել:

Բոլորն էլ ճաշի նստան, աղօթեցին ու խո-  
տի վրայ թեք ընկան քնեցին:

Արդէն մութն էր, դեռ ևս խորովածների  
ծուխը բարձրանում էր. այժմ ծառաներն էին  
իրանց համար ճաշ պատրաստում:

Ամենքը հանգստացան, կըակները հանգցրին:  
Լուսնեակ գիշեր էր. լուսինը կամաց կա-  
մաց գլուխելով երկնակամարի վրայ լուսաւո-  
րում էր քաջերի բանակը: Անուշ լեռնային գե-  
րիւուր շոյշուում էր նըանց երեսները: Գիշերը

խաղաղ անցկացնելուց յետոյ, դեռ աղամամութն էր՝ երբ բանակի մէջ արդէն շփոթ բարձրացաւ և ինչպէս մի մարդ՝ բոլորն էլ ոտքի ելան. առջօթեցին և իրանց կարգի բերեցին:

Հետախուզողող զինւորները հեհեալով ծիաները քափ ու քրտնքի մէջ փրփրած՝ մի քանի ժամաւայ ճանապար հարագ կարելով ուղղակի ծիաները կանգնեցրին Զօրայրի վրանի առաջ, որտեղ փրփռում էր արծւանշան գրօշակը, թռան ձիաներից, իշխան Զօրայրը իսկոյն գուրս եկաւ վրանից և անհամբեր սկսեց հարց ու փորձ անել.

—Տէր իմ, Ալի խանի զօրքերը գտնւում են Խաչէն գիւղի մօտ, որը կրակ է տւած թըշնամուց։ Որքան հետամուտ եղանք, Ալի խանի զօրքի թիւը մօտաւորապէս 15,000 կ'լինի, ձիաւորները մօտաւորապէս 6000 հոգի կ'լինեն, իսկ մնացեալը հետեւակ։ Մի մասը Ալի խանի առաջնորդութեամբ վերին ճանապարհով անցան, իսկ միւս մասը Թալիշ խանի առաջնորդութեամբ անցան ներքեկի կողմով գէպի դաշտը…

—Այդ ինչն, —համբաւաբերի խօսքը կտրեց Ժիրայրը։

—Որպէս զի երկու կողմից պաշարեն բերդը, —ասաց Զօրայրը։ Յետոյ, —զիմեց Զօրայրը համբաւաբերին։

—Տէր իմ, պէտք է աւելացնեմ, որ Ալի

խանը իրան աջ թեկի վրայ ունէր կաջարներին, ինչպէս է Բաղիր խանը, Զիրայրի խանը, Հուսէին Զէինալ խանը, Մահմէդ Բէզիր խանը, Թահրի Բաշբէուք խանը…

—Բոլորն էլ հսկաներ են, —ասաց Զօրայրը։  
—Կաջարների աջքն են դրանք, —ասաց Մահմէկոնը։

—Մի վախէք, իմ զօրականներ, բայց և այնպէս յաղթութիւնը մեր կողմն է, ասաց ոգեսուած Զօրայրը։

—Թող Աստւած ձեր սուրը կտրուկ անի, —ասաց ծերունի Տէր Ներսէսը։

—Ել հարկաւոր չէ ժամանակ կորցնել, պատրաստեցէք, թող զօրքը ճաշի, ձիաներին ջրեն։ Գնանք մենք էլ ճաշելու, —ասաց Զօրայրը։

Ճաշը վերջացաւ։ Բոլորի վրայ մի տեսակ ոգեսորութիւն ու եռանդ էր երկում, ուրախութիւն՝ հայրենիքը փրկելու համար։ Զօրայրը գուրս եկաւ վրանից ու հրամայեց փողերը հընչեցնել. զօրքերը պատրաստեցան, զօրապետներից ամէն մէկը իր գունդի գլուխն անցաւ։ Սպարապետը իր ոսկէգոյն նժոյգի վրայ նստած իր թիկնապահների հետ անցաւ զօրքերի շարքերը, հարցըց նրանց առողջութիւնը ու մի ոգեսորւած ճառ խօսեց. նա այնպէս բարձրացը զօրքի ոգեսորութիւնը, որ զժւար էր նրանց զսպել։ Զօրայրի տեսքը շատ գեղեցիկ էր, նրա

լուրջ հայեացքը յարգանք ու սէր էր ներշնչում  
բոլորի մէջ:

Տէր ներսէս հայրը պատարագ մատուցեց,  
խրախուսական քարող խօսեց ու օրհնեց զօր-  
քին:

Զօրքը երեք մասի բաժանւեց ու փողերը  
հնչեցնելով, դրօշակաւորներն առաջ անցան ու  
զօրքը երգելով շարժւեց տեղից: Անցան Խրամի  
կամուրջով ու դուրս եկան Բոլնիսի դաշտը և  
ամեն մէկը իրանց դիրքերը անցան:

Ահա, հեռւից պարզ նկատելի էր Պարսից զօրքի  
գալը, ձիաներու տրօփից թողի ամպեր էին կազ-  
մւել, փոքր առ փոքր երկու կողմից առաջապահ  
գնդերը մօտենում էին իրար. նախյարձակ դոր-  
ծեցին Պարսիկները, յարձակումը կատաղի էր,  
բայց նրանց սարսափեցրեց այն թակարդը, որը  
սարքել էր Սարօն, մի քանի հարիւր սաժէն  
երկայնութեամբ ձորակը ծածկւած էր փայտե-  
րով ու ձիւղերով և վերևից հող էր ածւած. ան-  
սպասելի էր առաջապահ գնդերի համար. նրանք  
կատաղած ձիաները քշելով՝ բոլորն էլ իրար  
բոթքոթելով՝ կոխճրտելով համարեա թէ <sup>3/4</sup> մա-  
սը այդ ձորում ոչնչացան, իսկ մի մասը գլու-  
խը առած փախան սարսափած: Ալի խանը կա-  
տաղած այս անյաջողութիւնից՝ շտապեց՝ չը  
սպասելով Թալիշ խանի զօրքին, իսկ Զօրայրը  
պաշտպանուելով կամաց-կամաց յետ նահանջեց.

այդ բանը շատ ոգեորեց Ալի խանին ու սկսեց  
հետապնդել: Զօրայրը շտապով իր զօրքը անց-  
կացրեց Խրամի ձորը: Ժիրայրը իր զօրքով ձախ  
կողմից, իսկ Դաւիթը միւս կողմից այնպիսի ա-  
րագութեամբ ու կատաղի յարձակում գործեցին  
Թալիշ խանի զօրքի վրայ, որ նրանք գլուխը  
կորցրած փախուստ տւեցին, իսկ հայոց զօրքը  
նրանց այնպիսի կոտորած սարքեց, որ իրանց  
կեանքում չէին տեսած: Թալիշ խանը ուրիշ մի  
քանի խաների հետ ընկան պատերազմի դաշ-  
տում, իսկ զօրքի ողորմելի միացածները փախան  
առանց յետ նայելու:

Դաւիթը ժամանակ չ'կորցնելով հասաւ Ալի  
խանի զօրքի թիկունքից, յաջողւեց փայտեայ  
կամուրջը քանդելու ու նոր կամուրջով շտա-  
պեց օգնութեան հասնելու Զօրայրին:

Ալի խանը յանկարծ կանգ առաւ հետեւելու  
իշխան Զօրայրին, նա փոխեց իր ձանապարհը  
ու ներքին գաղտնի ձանապարհով, որ շինւած  
էր պատերազմական նպատակների համար ու  
անցնում էր խիտ ծածկւած ծառուղիների մի-  
ջով՝ շտապեց դէպի այդ կողմով տիրանալու  
բերդին: Զօրայրը իսկոյն հասկացաւ այդ մա-  
սեռվրան.—Սա դաւաղըութիւն է սարքած, տը-  
ղերք: Նա առանց ժամանակ կորցնելու հրամա-  
յեց.—տղերք, հետեւեցէք ինձ: Եւ մի անհասկա-  
նալի արագութեամբ մի մեծ շրջան տալով բեր-

դի արևմտեան կողմից, վրայ հասաւ ժամանակին, կանգնացրեց Ալի խանի զօրքը։ Զօրայրը իսկոյն հրամայեց փողեր հնչեցնել և յետ մնացած զօրքին կանչել. Դաւիթը շուտով վրայ հասաւ և մի փոքր յետոյ ժիրայրը իր զօրքով. եթէ փոքր էլ ուշանային՝ արդէն բոլորովին ջարդւած պէտք է լինէր ծառաներով ու քաղաքացիներով պաշարւած բերդը, որոնց գլուխը կանգնել էր իշխանունի Սէղան, որ մինչ զօրքի հասնելը անձնուրացութեամբ կուռւմ էր Ալի խանի ահուելի հրսուակների դէմ։

Ալի խանը տեսնելով, որ Զօրայրը ջանք է թափում կենտրոնը ճղելու, նա բարձրածայն սկսեց հրամաններ արձակել։

— Բաղիր, հասիր, Զիբրայիլը ընկաւ, — այս ասաց ու ճիռն մարտկեց Ալի խանը։

Բաղիր խասը կատաղած առաջ անցաւ, կպան երկու հերոսները, փոնչացին ճիաները, բաղիւեցին վահանները, սրերը ճօճացին օդում, — Բաղիրը սկսեց բարձրածայն գոռալ, — հնաղանդւիր, իշխան, եթէ ոչ երկու կէս կանեմ։

Զօրայրը որ առիւծ էր կտրւել՝ վրայ բերեց իր գուրզը, վահանը փշրեց Բաղիրի զըլւիին ու մի հարւած էլ ու Բաղիրը ընկաւ ճիռոց։ Բաղիրին օգնութեան հասաւ Հուսէին Զէինալ խանը, բայց քաջ Վահրամը վրայ հասաւ ու սրի մի հարւածով ճղեց նրա գլուխը ու Հուսէինը

արիւնաթաթախ գլորւեց գետին։ Զօրայրը աջ ու ձախ հնձելով հասաւ Ալի խանին, մի քանի անգամ ձիաներով իրար զլխով պտոյտներ արեցին, յետ ու առաջ անցան, վահանները իրար զարկեցին, բայց Ալի խանը իզուր էր աշխատում Զօրայրի ձին սպանելու, իսկ Զօրայրը այդ չէր կամենում, նա աշխատում էր նրա թիկունքը ընկնելու և ընկաւ էլ, Զօրայրը մի հարւածով ուսը փշրեց, Ալի խանը տեսնելով որ զօրքը պէտք անտէր մնայ, սկսեց կանչել։ Մահմէդ Բէզիր խանին, բայց լսող չ'կար, ամենքը գլուխը կորցրել էին և իրանց փրկութիւնն էին որոնում։ Պարսից զօրքը տեսնելով իր հրամանատարի անկումը, սարսափած սկսեցին անկարդ փախչել աջ ու ձախ Զօրայրի քաջերի հարւածներից։ Յաղթութիւնը կատարեալ էր։ Վարոսը տեսնելով այս անյաջողութիւնը և զիտենալով թէ ինչ էր իրան սպասում, ընկաւ իր սրի վրայ ու սպանւեց։ Հայոց քաջերը երկինք էին թնդացնում իրանց կեցցէներով։ Վիրաւորւաներ ու սպանւածներ բաւական չափով կային, ծանր վիրաւորւած էր իշխան Վահրամը, Միհրանը, թէկ վէրքերը մահացու չէին, սպանւած էր Սմբատ իշխանը, վիրաւորւած էին թեթև Դաւիթն ու Դրաստամատը, իսկ թշնամու կողմից համարեա ամբողջ զօրքը ոչնչացած էր ու

գերի բռնւած, Ալի խանի վէրքը մահացու էր և  
հազիւ երկու օր ապրեց:

Ահա, այնտեղ ուրախութեան կեցցէներ էին  
դուռում ու ուրախանում, իսկ միւս տեղում  
բերդի դռան առաջ ողբերգութիւն էր կատար-  
ւում. ամրոցի դռան առաջ կանգնած էր Զօ-  
րայրի ծերունի մայրը իր նաժիշտներով և հե-  
տեւում էին պատերազմի ընթացքին, ծառանե-  
րից մի քանիսը մօտակայ բլրի վրայ կանգնած  
յանկարծ նկատեցին, որ Վարոսը թշնամու զօր-  
քի առաջ ընկած առաջնորդում էր գաղտնի ճա-  
նապարհով դէպի ամրոց, նրանք վազէ-վազ ե-  
կան ու ծերունի իշխանունուն այդ ծանր բո-  
թը տւին:

Ծերունին տեսներով Վարոսի այդ դատա-  
պարտելի վարմունքը՝ մի քանի անգամ զլիքին  
ու ծնկներին զարկեց, նա լաց էր լինում աղի  
արցունքով ու բարձրածայն կանչում.

—Վարոս, Վարոս, չորանայ քո ծնունդը,  
չորանար այն պտուղը, որ բեզ չըերէի: Առաւ  
սուրը ծառայի ձեռքից ու հրամայեց շուտով  
փակելու հայեաթի դռները: Ծառաները դլուխը  
կորցրած մոռացան ծերունի իշխանունուն յետ  
տանելու: Իսկ ծերունին համարեա խելագար-  
ւած լաց էր լինում ու նզովք էր կարգում դա-  
ւաճան որդու գլխին:

—Վայ, թող կարւէր այս ստինքերս, որ

քեզ չը կերակրէի. Նա շորերը պատառուեց ու  
սուրը քաշեց ու կտրեց մի ստինքը, շպրտեց  
բերդի դռան ճակատին, կտրեց երկրորդն ևս ու  
նոյն տեղ խփեց, իսկ ինքը արիւնշաղախ ընկաւ  
գետին ու աւանդեց հոգին:

Այդ օրւանից թէև դարեր սահեցին, բայց  
արիւնոտ ստինքերի տեղերը մինչև այսօր մը-  
նում են ու որպէս աւանդութիւն մինչ այսօր  
գիւղացի կանայք մատով են ցոյց տալիս ու ա-  
նիծում են դաւաճան Վարոսին. մինչև անզամ  
առած է դարձել, երբ մէկը այդպիսի զազրելի  
գործ է կատարում, ասում են «Մօր ծիծ կըտ-  
րող»: Վարոսի համար ասում է աւանդութիւնը,  
որ իբր թէ դեկերը բռնել են ու տարել և Պը-  
տըտան գեօլում խեղդել:

Դարեր անցան Շամշուլդա բերդի փառաւոր  
օրերից, սակայն Պարսիկների, Սելջուկների և  
վայրենի ազգերի անդադար արշաւանքները կոր-  
ծանեցին այդ անառիկ բերդը, այսօր միայն ան-  
ցեալ փառքի բեկորներն են մնացել: Աւազանե-  
րի մէջ ահազին ծառեր են բուսել և սրբատաշ  
քարերը տեղահան եղել և բնութեան աւերիչ  
ձեռքը քանդում է օրից օր և գուցէ յաւիտեանս  
ջնջւի դրա յիշատակը՝ եթէ հայ ժողովրդի ինք-  
նաճանաչ ոգին չափատի կորստից:



57339

